

րայ, կարծես թէ տակաւին նոր խնկած էր Մագդաղենացին և տակաւին կը տեսնուէին արցունքները Մարիամու՝ որ փրկչին անկենդան մարմինը պահած էր:

Ահա յանկարծ մթին և լռին տաճարը գիշերուան մթութեան մէջ ինքնիրեն կը լուսաւորուի ի պատիւ անոր: Մարած մոմերը յանկարծ կը վառին, կանթեղները անծանօթ լոյսով կը փայլին, ջահերը կը կայծկլտին, եօթնաստեղնեան աշտանակները կը լուսաւորուին, բաց երկնքէն կ'իջնէ աստղազարդ լոյսի ճառագայթ մը, եւ անծանօթ երգեր կը լսուին տաճարին խորհրդաւոր խորութեան մէջ:

Ս. Խաչին պահապանը ապշահար՝ կը նայի ուխտաւորին երեսը. կը փարատէ տարակոյսը, կ'ուրախանայ, և անոր ոտքը իյնալով՝ կը գոչէ. «ողջոյն քեզ, կեսարդ յաղթական. բարեաւ եկիք Ս. Գերեզմանը, յարուցեալն ի մեռելոց Գրիստոս լսէ քու ուխտդ...»:

Թէոդոսն էր ան, մեծն Թէոդոսը (379-395) երկրորդ աշխարհիկ հիմնադիրը քրիստոնէութեան, որուն մէջ կը տեսնուէր իր պապուն Տրայանոսի (98-117) մեծ հոգին: Թէոդոս գահուն յափշտակիչ Եւգինէոսի եւ Արպոկասդի սրովն պաշտպանուած հեթանոսական հակազդեցութեան դէմ կռիւ մղելէ յառաջ ուխտի եկած էր Ս. Գերեզմանին վերջնական յաղթանակին բարեգուշակութիւնը խնդրելու, վասնզի անկէ վերջն էր որ խաղաղ և աչքերը երկինք յառած՝ փառօք պիտի կրնար ննջել Գրիստոսի նշանովը օրհնուած կայսերական պատանքին մէջ: Սիդոնի մէջ գտնուած քրիստոնէական տապանագիր մը կ'ըսէ. «Գրիստոսի խաչը մեռելոց յարութիւնն է» (տե՛ս Լ. Տ. Տ. էջ 32-34, նաև Հան. էջ 182):